ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-438-24.11.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1. Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության» բառերը շարադրել «4-ի» թվից հետո՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	Հոդված 4	2. ՀՀ հարկային օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի գործող դրույթների և նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող լրացման միջև մտքային ճիշտ հաջորդականությունն ապահովելու նպատակով առաջարկվում է լրացումը կատարել ոչ թե որպես օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8 1-ին կետ, այլ որպես նույն մասի 8-րդ կետում նոր նախադասություններ:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածում «1-ին մասում լրացնել 8.1-ին կետ» բառերը փոխարինվել են «1-ին մասի 8-րդ կետում լրացնել նոր նախադասու-թյուններ» բառերով:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	Հոդված 24	3. Նախագծի 24-րդ հոդվածի «Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ» բառերն առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծի 24-րդ հոդվածից հանվել են «Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ» բառերը:	Ընդունվել է:
4"	ՀՀ կառավարություն	Հոդված 24	4. Նախագծի 24-րդ հոդվածում առաջարկվում է կատարել լրացում՝ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքի 15-րդ հոդվածում լրացվող 9-րդ մասում նշված կարգի ընդունման ժամկետների վերաբերյալ:	Ընդունվել է: Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվել է «2-րդ» բառը:	Ընդունվել է: